

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՎԱՐԴԳԵՍԻ

**ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արարատ Եղիշեի Չաքարյան

տնտեսագիտության թեկնածու
Արտակ Աղանիկի Բաղդասարյան

Առաջատար կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի մայիսի 8-ին ժամը 14⁰⁰-ին
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ԲՈՂ-ի
տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի ապրիլի 7-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տ.գ.դ., պրոֆեսոր



Ա. Լ. Ավանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության քեմայի արդիականությունը: Ներկայումս Հայաստանի Հանրապետության իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում բնակչության բարեկեցության աճն ու աղքատության հաղթահարումն է: Նշված խնդրի լուծումը դարձել է օրակարգային կառավարության համար տնտեսության դիվերսիֆիկացիայի (բազմատեսականացման) մակարդակի բարձրացման և արտահանման այլ ճյուղերի խթանման համատեքստում:

Դեպի ծով ելք չունեցող երկիր լինելու հանգամանքը առավել ցայտուն է դարձնում Հայաստանի, որպես մրցունակ, փոխադրման ծախսերից քիչ կախված ապրանքներ ստեղծող երկիր դիրքավորելու անհրաժեշտությունը: Ուստի Հայաստանը պետք է կարողանա առավելագույն օգուտ քաղել զբոսաշրջության ոլորտի զարգացմամբ ընձեռած հնարավորություններից, քանի որ այն ոչ միայն զերծ է արտահանման խոչընդոտներից, այլ նաև չի պահանջում համապատասխան տրանսպորտային ծախսեր: Հաշվի առնելով վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի արձանագրած ցուցանիշները, կարող ենք փաստել, որ զբոսաշրջությունը ՀՀ-ում ունի բավականին մեծ ներուժ նպաստելու տնտեսական աճին և ներկայանալու որպես այլ ճյուղերի այլընտրանք:

Վերոնշյալի լավագույն ապացույց են հանդիսանում ոլորտի վերաբերյալ մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի վիճակագրական տվյալները: 2012թ.-ին համաշխարհային տնտեսությունում զբոսաշրջությունը կազմել է ՀՆԱ-ի 9.3%-ը կամ 6.630.4 միլիարդ ԱՄՆ դոլար, ոլորտում կապիտալ ներդրումների ծավալը հասել է 764.7 միլիարդ ԱՄՆ դոլարի, իսկ աշխատողների թվաքանակը կազմել է 261.394.000 մարդ կամ ամբողջ զբաղվածների 8.7%-ը:¹ Հարկ է նշել, որ 2012թ.-ին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է զբոսաշրջիկների թվաքանակի մոտ 5% աճ՝ կազմելով 1.035 միլիոն մարդ:²

Ակնհայտ է, որ այսօր շատ զբոսաշրջային կենտրոններ ներգրավված են սուր մրցակցային պայքարի մեջ: Այս առումով համաշխարհային տնտեսության ժամանակակից զարգացումները, մասնավորապես ազգային տնտեսությունների փոխկապվածությունը առավել սերտացնող գլոբալիզացիայի գործընթացները առանձնակի սրությամբ են շեշտադրում այդ երկրների միջազգային մրցունակության բարձրացման հրամայականը:

Այս համատեքստում, կարևոր նշանակություն են ձեռք բերում զբոսաշրջության մրցունակության ձևավորման և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում մրցունակության դրսևորման գիտամեթոդաբանական հիմքերի ձևավորումը: Ելնելով վերոնշյալից՝ մրցակցության և մրցունակության հարցերը զբոսաշրջության ոլորտում ունեն

¹ Travel and Tourism Economic Impact 2013: World, World Travel and Tourism Council, London, UK, 2013, pp. 3-5.

² UNWTO World Tourism Barometer, Volume 11, January 2013, p. 1.

գիտական խորը ուսումնասիրության, նրա օրինաչափությունների և հիմնական միտումների վերհանման կարիք:

Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Չնայած, զբոսաշրջային ծառայությունների մատուցման տնտեսական կարգավորման և կառավարման որոշ հիմնախնդիրներ արդեն իսկ ուսումնասիրության են արժանացել հայազգի և օտարերկրյա հետազոտողների կողմից, սակայն դրանք կրում են մասնակի բնույթ և վերաբերում են զբոսաշրջության ոլորտի առանձին ուղղություններին՝ նպատակ չունենալով ներկայացնելու զբոսաշրջության մրցունակության բարձրացման համապարփակ մեխանիզմը: Ավելին, զբոսաշրջային արդյունաբերության և նրա տարբեր մակարդակներում մրցակցության դրսևորման առանձնահատկությունները բավարար չափով ուսումնասիրված չեն, իսկ ՀՀ զբոսաշրջության ոլորտի մրցունակության ձևավորման ու ապահովման տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները մնում են սակավ հետազոտված և գիտական գրականության մեջ զրեթե լուսաբանված չեն: Հենց տվյալ հիմնախնդրի արդիականությունը և այս ոլորտի ոչ բավարար մշակվածությունն էլ հիմք է ծառայել սույն հետազոտության իրականացման համար:

Ներկայացվող ատենախոսությունում փորձ է արվել լրացնել այդ բացը, շեշտադրում կատարելով առավելապես զբոսաշրջության ոլորտի զարգացման մակրո- և մեզոմակարդակների հիմնախնդիրներին, քանի որ ներգնա զբոսաշրջության զարգացման տեսանկյունից Հայաստանը համաշխարհային զբոսաշրջային շուկայում պետք է հանդես գա որպես գրավիչ և մրցունակ զբոսաշրջային ուղղություն, որն ունակ է խթանելու ինչպես ամբողջ երկրի (մակրոմակարդակ), այնպես էլ առանձին զբոսաշրջային կենտրոնների (մեզոմակարդակ) մրցունակությունը: Այս համագամանքն էլ կանխորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսության նպատակը զբոսաշրջության ոլորտի արդի իրավիճակի համակողմանի վերլուծության, ինչպես նաև ոլորտի մրցունակության համապարփակ մեխանիզմի ուսումնասիրության հիման վրա ՀՀ զբոսաշրջության մրցակցային դիրքի բարելավման հնարավոր մոտեցումների բացահայտումն է: Այս նպատակի իրագործումը ենթադրել է հետևյալ խնդիրների ջննդարկումը.

- ուսումնասիրել զբոսաշրջության մրցունակության էությունն ու բնորոշ առանձնահատկությունները,
- վեր հանել զբոսաշրջության ոլորտի մրցունակության բոլոր մակարդակներում մրցակցության դրսևորման առանձնահատկությունները և վերլուծել մրցունակության գնահատման հիմնական մոտեցումները մրցունակության գնահատման մեթոդիկայի կատարելագործման նպատակով,
- հետազոտել ՀՀ զբոսաշրջային շուկան, բացահայտել ոլորտի զարգացման նախադրյալները և ներկայացնել ներքին և ներգնա

զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն ու հաղթահարման ուղիները,

- իրականացնել ՀՀ և համաշխարհային զբոսաշրջության շուկաների համեմատական վերլուծություն և բացահայտել ոլորտի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը,

- բացահայտել ՀՀ զբոսաշրջային շուկայի մրցունակության բարձրացման գերակա ուղղությունները և մշակել մրցունակության ապահովման հայեցակարգային դրույթները,

- ներկայացնել պետական կարգավորման դերն ու գործառույթները զբոսաշրջության ոլորտի մրցունակության խթանման գործընթացում մատնանշելով պետական կարգավորման բարեփոխումների ուղղությունները:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտն է, իսկ առարկան Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, գործող օրենսդրությունը, ինչպես նաև գործադիր իշխանության կողմից զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ մշակվող միջոցառումներն ու ծրագրերը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական

հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել զբոսաշրջության ոլորտի հայրենական և օտարերկրյա տեսաբանների աշխատությունները, գիտական հրապարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները, ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի օրենսդրությունը և նորմատիվային այլ ակտեր:

Վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային տնտեսական ֆորումի (World Economic Forum) և Համաշխարհային ճանապարհորդությունների և զբոսաշրջության խորհրդի (World Travel and Tourism Council) զեկույցներից, Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման ցուցիչները» (World Development Indicators) և «Գործարարությամբ զբաղվելու» (Doing business) հաշվետվությունների տվյալներից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական վերացարկման (աբստրակցիայի), վերլուծության (անալիզի) և համադրության (սինթեզի), կառուցվածքային, ինչպես նաև համակարգային վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական ստրուկտուրաները և նորույթը:

- Կոռելյացիոն վերլուծության միջոցով բացահայտվել և հիմնավորվել են զբոսաշրջության ոլորտում բարեփոխումների առաջնային թիրախները որպես ուղենիշ ամրագրելով մրցունակությունը բնութագրող գործոնների միջազգային կառույցների վարկանիշային ցուցանիշներն ու գնահատականները:

- Իրականացվել է մանրակրկիտ SWOT վերլուծություն, որի արդյունքում մշակվել է զբոսաշրջության մրցունակության բարձրացման ռազմավարություն, մասնավորապես պատմամշակութային և գործարար զբոսաշրջության հիմքի վրա համակցված և դիվերսիֆիկացված փաթեթների ձևավորում, պրոակտիվ

ներդրումային քաղաքականության մշակում մարդկային ռեսուրսների վերապատրաստման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ինչպես նաև զբոսաշրջության խթանման ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ակտիվացում:

- Առաջարկվել է զբոսաշրջային կենտրոնների մրցակցային պայքարի նոր մոդել հիմնված տեղի բնակչության ակտիվ մասնակցության վրա, որը ենթադրում է տնտեսական դրդապատճառներ: Այս դրույթը աշխատանքում ներկայացված է Պորտերի մրցակցային ուժերի մոդելի ևս մեկ բաղադրիչի տեղի բնակչության բացասական ազդեցության վտանգով:

- Զբոսաշրջության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, առաջարկվել է օրենսդրական փոփոխությունների հայեցակարգ ուղղված պետական կարգավորման մեխանիզմների կատարելագործմանը և առավել նախընտրելի գործիքակազմի կիրառմանը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգերի բարելավմանը, զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացի վերականգնմանը և ոլորտի պաշտոնական վիճակագրության մեթոդաբանության լրամշակմանը:

Հետազոտության արդյունքների կիսառոտը և գործնական մշանակությունը: Ատենախոսության մեջ ներկայացված տեսական և մեթոդական դրույթները, վերլուծությունները, եզրահանգումները և առաջարկությունները կարող են կիրառվել օրենսդիր և գործադիր մարմինների կողմից զբոսաշրջության զարգացման և մրցունակության բարձրացմանն ուղղված ռազմավարությունների մշակման, կատարելագործման և իրականացման նպատակով: Որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել նաև զբոսաշրջության ոլորտի հիմնահարցերով զբաղվող մասնագետներին և հետազոտողներին:

Հետազոտության արդյունքների փորձառնությունը և հոսապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնում կազմակերպված պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և ուսանողների գիտական նստաշրջաններում:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են 4 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է 147 էջի վրա ներառյալ օգտագործված գրականության ցանկը: Աշխատանքում ներառված են 32 գծապատկեր և 10 աղյուսակ:

ԱՄՆԵԱՆՈՒՍՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել են հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հիմնական նպատակն ու խնդիրները, օրյեկտը և առարկան, տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ծնակերպվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը և դրա գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին **«ՋՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՏԱՆ ՏԵՍԱՆԵԹՈՂԱԿԱՆ ԴԻՄՔԵՐԸ»** գլխում դիտարկվել են զբոսաշրջային արդյունաբերության սոցիալ-տնտեսական բնութագրիչները, ներկայացվել է մրցունակության գաղափարը, դրա գնահատումը պայմանավորող գործոնները և ընդգծվել մրցունակության կարևորությունը զբոսաշրջության հետագա զարգացման համատեքստում:

Համաշխարհային տնտեսության զարգացման պատմությունը և աշխարհի երկրների փորձը ցույց է տալիս, որ զբոսաշրջությունը կարող է հանդիսանալ սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրների լուծմանը նպաստող ոլորտ, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտագործելու ամբողջ աշխարհում ծնավորված և գործնականում գրեթե անսահմանափակ, շրջագայությունների նկատմամբ կայուն պահանջարկը, որը յուրաքանչյուր երկրի համար արտարժույթային եկամուտների մեծ ներհոսք է ապահովում:

Ըստ Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՋԳԿ) կանխատեսումների՝ 2020թ.-ին աշխարհում միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կկազմի 1.6 միլիարդ, զբոսաշրջային ծախսերի գումարը կհասնի մինչև 2 տրիլիոն ԱՄՆ դոլարի, իսկ ոլորտում աշխատատեղերի թիվը 262 միլիոնի:³ Աշխարհի բազմաթիվ երկրներ զբոսաշրջության ոլորտում իրենց պետական քաղաքականության նպատակներից են սահմանել համաշխարհային շուկայից ավելի մեծ թվով ժամանումների և ավելի շատ եկամուտների ներգրավումը: Ավելորդ չէ նշել, որ ըստ ՋԳԿ փորձագետների կանխատեսումների զբոսաշրջային այցելությունները 2030թ.-ին կկազմեն 1.8 միլիարդ:⁴


Ներկայիս համաշխարհային տնտեսությունը բնութագրվում է զբոսաշրջային արդյունաբերության դերի բարձրացումով, քանի որ անընդհատ ընդլայնվում է մատուցվող ծառայությունների շրջանակը, նկատվում է ոլորտում զբաղվածների թվի աճ: Ջբոսաշրջային ծառայությունների արդյունքում միայն 2012թ.-ին համաշխարհային տնտեսության մեջ արձանագրվել է զբաղվածության 1.6%-ով աճ, ներդրումներն ավելացել են 2.4%-ով, իսկ ՀՆԱ-ում

³ Tourism 2020 Vision: Global Forecasts and Profiles of Market Segments, Volume 7. World Tourism Organization, 2001, pp. 9-10.

⁴ Tourism Towards 2030/Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly, World Tourism Organization, 2011, p. 15.

զբոսաշրջային ձեռնարկատիրության արդյունքն աճել է 3.2%-ով՝ հասնելով 2.056.6 միլիարդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը:⁵

Զբոսաշրջությունը որպես տնտեսության ճյուղ համալիր է և կոչված է սպասարկելու տնտեսական համակարգի «ողջ օրգանիզմը», նպատակ ունենալով ապահովելու հանրային, ձեռնարկատիրական և տնային տնտեսությունների գործունեության զարգացման անխափան ընթացքը բոլոր մակարդակներում՝ ուղղակի և անուղղակի ազդեցությամբ նպաստելով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Փաստորեն՝ զբոսաշրջությունն ուղղակի և անուղղակի ձևով ազդում է ընդհանուր տնտեսության վրա, որոնք արտացոլվում են մակրոտնտեսական մի շարք ցուցանիշներում (տեսն գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Համաշխարհային զբոսաշրջության ուղղակի և անուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ի և զբաղվածության վրա 2003-2012թթ.⁶

Հիմք ընդունելով վերոնշյալ ցուցանիշները՝ կարելի է փաստել, որ զբոսաշրջության ազդեցության շրջանակը չի սահմանափակվում զուտ տնտեսական գործընթացներով, այլ նաև լուծում է մի շարք սոցիալական խնդիրներ՝ ավելի ցայտուն դարձնելով ոլորտի հետագա զարգացման կարևորությունն ու մրցունակության ապահովման անհրաժեշտությունը: Նշենք, որ մեծածավալ տնտեսական գործոնների առկայությունը, տվյալ երկրի աշխարհագրական դիրքը, մրցունակության համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններն են, քանի որ բարեկեցիկ կենսապայմանները

⁵ Travel and Tourism Economic Impact 2013: World, Travel and Tourism Council, London, UK, 2013, pp. 1, 10.

⁶ Գծապատկերը կազմվել է ըստ համաշխարհային զբոսաշրջության և ճանապարհորդությունների խորհրդի 2003-2012թթ.-ի տվյալների բազայի, <http://www.wttc.org/research/economic-data-search-tool/>.


ժառանգաբար չեն փոխանցվում, այլ ստեղծվում են երկրի առանձին ընկերությունների ռազմավարական ընտրություններով:⁷ Այլ կերպ ասած մրցունակությունը արդյունավետ և արտադրողական լինելու ունակությունն է: Մրցունակությունը վերաբերում է նաև կառավարության ունակությանը վերացնելու ոլորտի առջև ծառայած խոչընդոտները, ապահովելու նպաստավոր կանոնակարգեր, ենթակառուցվածքներ և ծառայություններ:⁸ Ընդհանրացնելով մրցունակության վերաբերյալ սահմանումները և գիտական գրականության մեջ առկա տարբեր մոտեցումները, ատենախոսի կարծիքով **զբոսաշրջության մրցունակությունը դա երկրի ներուժային կարողությունն է համաշխարհային շուկա ներկայացնել մեծ պահանջարկ վայելող զբոսաշրջային արդյունք, որը կապահովի բարձր տնտեսական աճ միաժամանակ նպաստելով տեղի քնակչության կենսամակարդակի բարձրացմանը:**

Զբոսաշրջության ոլորտը ոչ միայն սերտորեն փոխկապակցված է տնտեսության տարբեր ճյուղերի հետ, այլև ուղղակիորեն կախված է տվյալ ճյուղերում արձանագրվող ցուցանիշներից: Այս յուրահատկությունն էլ պայմանավորում է զբոսաշրջության ոլորտի մրցունակության գնահատման մեխանիզմը, որը հիմնված է ոչ միայն զուտ մակրոտնտեսական, այլ նաև տարբեր ոլորտների զբոսաշրջության ոլորտին առնչվող խնդիրների վրա: Նման մոտեցումը թույլ է տալիս ոլորտը դիտարկել ոչ թե մեկ սահմանափակ տեսանկյունից, այլ որպես միջդիսցիպլինար ֆենոմեն. որի ճշգրիտ գնահատման համար անհրաժեշտ է բազմակողմ մոտեցում: Ատենախոսությունում հիմնականում հետազոտության են ենթարկվել մակրո- և մեզոմակարդակներում մրցունակության հիմնախնդիրները, որոնք առավել քիչ են ուսումնասիրվել:

Հայտնի է, որ զբոսաշրջության մրցակցային միջավայրը դրսևորվում է ծառայությունների շուկայում: Ծառայությունների արժեքը ՀՆԱ-ի կազմում կարևոր գործոն է տնտեսության զարգացման աստիճանը որոշելիս: Ի համեմատ զարգացած երկրների, ՀՀ-ում ծառայությունների ոլորտի աճի տեմպերը թեև հետ են մնում, այնուամենայնիվ, վերջին 10 տարիներին նկատվում է բարձր ակտիվություն տնտեսության այս ոլորտում (տես գծապատկեր 2):

⁷ Porter M. "The Competitive Advantage of Nations", Harvard Business Review, 1990, p. 73.

⁸ Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2008, էջ 13:



Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքը 2003-2012թթ. (%)⁹

Միաժամանակ, պետք է փաստել, որ ծառայությունների ոչ բոլոր ինքատիրոսներում է գրանցվել աճ, առավել ևս, երբ արժանագրվել է նաև ռառայությունների տարբեր տեսակների ոչ համամասնական զարգացում (տես յծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ-ում մատուցվող ծառայությունների կառուցվածքը 2012թ. (%)¹⁰

Փաստորեն, ՀՀ ծառայությունների շուկան ներկայումս հանդես է գալիս որոշ առանձնահատուկ գծերով, որոնք հիմք են ծառայում կատարելու որոշ յզրահանգումներ՝ ի նպաստ ոլորտի բարելավման.

> Մտաչին. համահարթեցման կարիք ունեն մարզերում և մայրաքաղաքում յատուցվող ծառայությունների ծավալները, քանի որ երևանում է յենտրոնացված մատուցվող ծառայությունների զերակշիռ մասը:

⁹ ՀՀ ԱԿՑ տարեկան ցուցանիշներ. ՀՆԱ արտադրություն, Երևան, ԱԿՑ, 2006-2012: ¹⁰ Տես նույն տեղը:

➤ Երկրորդ. հանրապետությունում մատուցվող ծառայությունների կառուցվածքը բարեփոխման կարիք ունի: Ներկայումս, առաջանցիկ զարգացում են ապրում կարճաժամկետ շահութաբերությամբ օժտված անհատական ծառայությունների տեսակները, այնինչ, ժամանակն է լուրջ ուշադրություն դարձնելու այնպիսի ոլորտների առաջխաղացմանը, որոնք առավելապես տարածաշրջանային ինտեգրման հենքի վրա են ձևավորվում և բավականին մրցունակ են հատկապես միջազգային շուկայում: Նման ոլորտ է զբոսաշրջությունը, որն անհրաժեշտ որակ ունենալու պարագայում, կարող է բարելավել մրցունակության մակարդակը զբոսաշրջային ծառայությունների միջազգային շուկայում: Իհարկե, վերջինիս բարելավման գործընթացը խոշոր ներդրումներ է պահանջում, սակայն մյուս կողմից՝ արդարացված է երկարաժամկետ հատույցով:


Ատենախոսության երկրորդ **«ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՆԻԴՈՒՄՆԵՐԸ»** գլխում ատենախոսը ներկայացրել է զբոսաշրջության զարգացման հիմնական ցուցանիշներն աշխարհում և Հայաստանում, ինչպես նաև մրցունակության արդի գաղափարական հենքերի կիրառմամբ առավել խորը վերլուծական հայացք գցել ՀՀ զբոսաշրջության ոլորտի միջազգային մրցունակության դիրքի և դրա վրա ազդող գործոնների վրա: Բացահայտվել են նաև զբոսաշրջության ոլորտի առանցքային իրողություններն ու դրանց հիմքում ընկած պատճառահետևանքային կապերը:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման բարձր տեմպեր (տես գծապատկեր 4): Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների 2012թ.-ին ՀՀ է ժամանել 843330 զբոսաշրջիկ կամ 2011թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշն աճել է 11.3%:¹¹ Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ 2009թ.-ին, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ համաշխարհային զբոսաշրջային այցելությունները նվազել են 4%-ով,¹² Հայաստանում, այնուամենայնիվ գրանցվել է 3% աճ:¹³ Տվյալ տարում աճի տեմպը նվազել է համեմատած մյուս տարիների հետ՝ իր հերթին բացասաբար անդրադառնալով միջին տարեկան աճի ցուցանիշի վրա:

¹¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ.-ի հունվար-դեկտեմբերին, Երևան, ԱԿԾ, 2012, էջ 123:

¹² World Tourism Organization and International Labour Organization, “Economic Crisis, International Tourism Decline and its Impact on the Poor”, World Tourism Organization, 2013. p. 1.

¹³ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ.-ի հունվարին, Երևան, ԱԿԾ, 2010, էջ 67:



Պատկեր 4. Գնապատկեր 4. ԳՂ ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի աճի դինամիկան 2003-2012թթ.¹⁴

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ չնայած պաշտոնական վիճակագրական տվյալներով 2012թ.-ին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ներգնա զբոսաշրջային այցելությունների երկնիչ աճ, սակայն համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ քանակությամբ: Հայաստանին է բաժին ընկնում եվրոպայում զբոսաշրջային այցելությունների միայն 0.15%-ը և համաշխարհային զբոսաշրջային այցելությունների 0.08%-ը:¹⁵ Ավելին, այցելությունների ցուցանիշով 2012թ.-ին տարածաշրջանում առաջատարն է Վրաստանը (4.39 միլիոն այցելություն),¹⁶ երկրորդ տեղում է Ադրբեջանը (1.99 միլիոն),¹⁷ երրորդում՝ Հայաստանը (0.84 միլիոն):

Ավելին, ԳՂ-ում զբոսաշրջությունից ստացվող մուտքերի և զբոսաշրջության ոլորտի եկամուտների համեմատական բաժինը ՀՆԱ-ում դեռևս բավականին ցածր է՝ այդ ոլորտի հսկայական ներուժի համեմատությամբ: Պետք է նշել, որ 2012թ.-ի դրությամբ զբոսաշրջության ուղղակի բաժնեմասը ՀՆԱ-ում կազմել է 2.1%՝ 87.4 միլիարդ դրամ: Կանխատեսվում է, որ այս ցուցանիշը մինչ 2023թ.-ը պետք է զբանցի տարեկան 2.1% աճ կազմելով 110.2 միլիարդ դրամ: Մինչդեռ ոլորտի համախառն բաժնեմասը ՀՆԱ-ում կազմել է 8.2%՝ 336.9 միլիարդ դրամ և մինչ 2023թ.-ը ակնկալվում է տարեկան 2.5% աճ հասնելով 444.8 միլիարդ դրամի:¹⁸

¹⁴ Հայաստան կատարած ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի աճի դինամիկան 2003-2012, www.mineconomy.am

¹⁵ UNWTO World Tourism Barometer, Volume 10, January 2012, pp.1-3.

¹⁶ http://www.gnia.ge/sitecontent/wp-content/uploads/2012/12/Industry-Overview_ENG8.pdf

¹⁷ Travel and Tourism Economic Impact 2013: Azerbaijan, World Travel and Tourism Council, London, UK. 2013, p. 5.

¹⁸ Travel and Tourism Economic Impact 2013: Armenia, World Travel and Tourism Council, London, UK. 2013, pp. 3-5.

Հայաստանի ներքին զբոսաշրջության մեջ նույնպես աճ է արձանագրվել: Վիճակագրական տվյալներով 2012թ.-ին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել է 514771 զբոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտ)՝ 5.2 %-ով ավելի, քան 2011թ.-ին: ¹⁹ Հարկ է նշել, որ Հայաստանի ներքին զբոսաշրջության զարգացմանը որոշ չափով նպաստել է նաև 2012թ.-ին մեկնարկված սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության ներդրումը: ²⁰ Սակայն, ընդհանուր առմամբ, ներքին զբոսաշրջության ցածր մրցունակությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ քաղաքացիների մեծ մասի ցածր վճարունակությամբ, որոնց համար հասանելի չեն միջազգային զննչին հասնող հյուրանոցները, առողջարանային ծառայությունները: Հետևաբար, զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակի ապահովման և ճկուն գնային քաղաքականության իրականացման պահանջ է առաջացել ներքին շուկայում, ենթադրելով զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման նպատակով ներդրումների իրականացում էժան զբոսաշրջային հանգրվաններում: Վերջինս հնարավորություն կընձեռի ծառայությունների առաջարկման լայն շրջանակի ձևավորում տարբեր գնողունակության զբոսաշրջիկների համար:

Անհերքելի է այն փաստը, որ ընդհանուր առմամբ, ՀՀ զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունն ուղղված է ՀՀ զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը: Իսկ «մրցունակություն» բառն առավել քան ընդգրկում է բնույթ է կրում՝ իր մեջ ներառելով այն տարրերի համակարգված ամբողջությունը, որոնց զարգացմամբ ու կատարելագործմամբ է զբաղվում պետությունը, ինչն էլ նպաստում է երկրի մրցակցային առավելությունների ձևավորմանը: Մրցունակությունը հասկացվում է որպես ապրանքի (ծառայության) սպառողական և գնային հատկանիշների համալիր, որը նրան թույլ է տալիս շուկայում հասնել հաջողության, այսինքն այն առավելություններն են, որոնք հնարավորություն են տալիս տարբերվել մրցակիցներից: ²¹ Ցանկացած երկրի զբոսաշրջության զարգացումը զգալիորեն կախված է այն մրցակցային առավելություններից, որոնք տրամադրում է տվյալ երկիրը կամ տարածաշրջանը զբոսաշրջիկներին ապրանքների կամ ծառայությունների մատուցման ժամանակ:

Համաձայն զբոսաշրջության մրցունակության համաթվի 2012թ.-ին 140 երկրների մեջ Հայաստանը զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը՝ 2011թ.-ի 90-րդի փոխարեն, իսկ Եվրոպական երկրների շարքում 39-րդ հորիզոնականը: ²² Չբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկում

¹⁹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվարին, Երևան, ԱԿԾ, 2013, էջ 84:


²⁰ «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.12.2011թ.-ի N 1917-Ն որոշում:

²¹ Басовский Л.Е., Протасьев В.Б. Управление качеством: Учебник. М.: НИФРА-М, 2001, стр. 123.

²² http://www.ev.am/media/documents/ITCR/2013/ITCR_Press_Release_2013.pdf

2012թ.-ին առաջատար դիրքեր են զբաղեցրել Եվեյցարիան, Գերմանիան և Ավստրիան: ԱՊՀ երկրների թվում Հայաստանը զիջել է Ռուսաստանին (63), Ուկրաինային (76) և Ադրբեջանին (78):

Բնականաբար անհրաժեշտություն է առաջանում գնահատել Հայաստանի դիրքերը տարածաշրջանային նմանակից և մրցակից երկրների հետ՝ փորձելով հասկանալ վերոնշյալ երկրների հաջողության հանգուցային գործոնները և բացթողումների հիմնարար պատճառները: Ուսումնասիրության համար դիտարկվել են Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ-ի և հարևան երկրները, որոնք ներկայացված են գծապատկեր 5-ում: Բացի պատմական և մշակութային առնչություններից այս ընտրությունը պայմանավորված է նաև երկրի դիրքավորման հնարավորություններով:




Գծապատկեր 5. Զբոսաշրջության մրցունակության համաթիվը համադրելի երկրներում 2012թ.²³

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 5-ը, 2012թ.-ին ընտրված երկրների խմբում ամենամրցունակ երկիրը Էստոնիան է: Հայաստանը միջինից ցածր վարկանիշ ունի և զիջում է Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներին: ԱՊՀ երկրների թվում Հայաստանը զբաղեցրել է 5-րդ տեղը:²⁴ Ներկայացված ցուցանիշների և մրցունակության 3 ենթահամաթիվների (զբոսաշրջության կանոնակարգող դաշտ, բիզնես միջավայր և ենթակառուցվածք ու մարդկային, մշակութային և բնական ռեսուրսների) միջև կապի սերտությունը և բարեփոխումների առաջնային թիրախները բացահայտելու նպատակով Պիրսոնի մեթոդով իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն և ընտրանքում ընդգրկվել վերոնշյալ համադրելի 21 երկրները: Ուզբեկստանը ընտրանքում ներառված չէ, քանի որ վերջինիս

²³ Blanke J., Chiesa T., "The Travel and Tourism Competitiveness Report 2013: Reducing Barriers to Economic Growth and Job Growth", World Economic Forum (WEF), Geneva, 2013, [Executive Summary, p. xvi].

²⁴ http://www.ev.am/media/documents/TTCR/2013/TTCR_Press_Release_2013.pdf

տվյալները ՁԳԿ բազայում ներկայացված չեն: Կոռելյացիոն վերլուծության արդյունքները զետեղված են գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 6. Ջրոսաշրջության մրցունակության և այն պայմանավորող ենթահամաթվերի միջև կոռելյացիոն վերլուծության արդյունքները²⁵

Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ գծապատկերը, գոյություն ունի սերտ կապ ընդհանուր մրցունակության և Ջրոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք ենթահամաթվի միջև ($r=0.952554$), ինչը գոյանում է կոնկրետ ուղղություններով պետական քաղաքականության գործունեությունից: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ Ջրոսաշրջության զարգացման պետական կարգավորման բարեփոխումները կնպաստեն սույն ենթահամաթվի բարելավմանը, որոնք համաձայնորեն ներկայացվել են ատենախոսության երրորդ գլխում: Հարկ է նշել, որ մրցունակության և Ջրոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ ենթահամաթվի միջև կոռելյացիոն գործակիցը նույնպես դրսևորել է սերտ կապ ($r=0.820508$), իսկ Ջրոսաշրջության կանոնակարգող դաշտ ենթահամաթվի և ընդհանուր մրցունակության համաթվի միջև կոռելյացիոն վերլուծության արդյունքում ստացվել է 0.782793 :

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունները, կարելի է փաստել, որ առկա մշակութային, մարդկային, բնական ռեսուրսներն ու օրենսդրական դաշտը մեծապես ապահովում են ոլորտի զարգացման նախադրյալները, իսկ Ջրոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածքը համդեա են գալիս որպես խթանող գործոններ՝ ազդելով ներգնա Ջրոսաշրջության աճի և մրցունակության մակարդակի ապահովման վրա:

Կարևոր է նաև Ջրոսաշրջության զարգացման բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորումը, որին մեծապես նպաստում են՝

²⁵ Կոռելյացիոն վերլուծությունը իրականացվել է ատենախոսի կողմից՝ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի (ԳՏՖ) Ջրոսաշրջության մրցունակության զեկույցի 2012թ.-ի տվյալների:

➤ Առաջին. «ագրեսիվ» մարքեթինգային քաղաքականության կիրառումը համաշխարհային շուկայի համապատասխանաբար ընտրված թիրախային հատվածներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջիկների ներգրավման համացանցային էջերը առավելապես նկարագրական բնույթ ունեն՝ ներկայացնելով երկրի պատմամշակութային արժեքները: Այնինչ ժամանակն է օտարերկրացիներին առաջարկել այնպիսի հրավերներ, որոնք պարունակում են ճկուն գնային առաջարկներ, հաշվի են առնում տարբեր ազգերի հյուրընկալության նախասիրությունները, ծառայությունների մատուցման առանձնահատկությունները և տրամադրվող զեղչերը:

➤ Երկրորդ. զբոսաշրջությունը ներառելով տնտեսության զարգացման առաջնահերթությունների շարքում, գուգահեռաբար ԶԳ կառավարությունը պետք է իրականացնի վարկային տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում այնպես, որ զբոսաշրջության շուկայի ուղղակի մասնակիցները (հատկապես տուրօպերատորները) և ոլորտը սպասարկող այլ ճյուղերում ներդրողները ձեռք բերեն համեմատաբար մատչելի ֆինանսական միջոցներ և դրանով մասնակիորեն նվազեցնեն զբոսաշրջային ծառայությունների ինքնարժեքն ու մատուցման գինը:

➤ Երրորդ. համարվելով որպես խոշորամասշտաբ ֆինանսավորման բիզնեսի ոլորտ, կարևորվում է նաև օտարերկրյա ներդրողների համար զբոսաշրջության ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծումը, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների հիմնադրման խթանումը, որի ուղղությամբ մեր հանրապետությունում դեռևս դանդաղ են քայլեր իրականացվում:


Ատենախոսության երրորդ **«ԶԳ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԹՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»** գլխում ամփոփվում և համադրվում են ատենախոսության երկու գլուխներում կատարված ուսումնասիրության արդյունքները և ստանալով ընդհանրական պատկեր՝ մատնանշվում են զբոսաշրջության մրցունակության բարձրացման գերակայությունները և զբոսաշրջության պետական կարգավորման բարելավման ուղիները:

ԶԳ տնտեսության զարգացման ներկա փուլում հնարավոր մարտահրավերներն ու խոչընդոտները չեն կարող պատճառաբանվել տնտեսության անցումային բնույթով, իսկ հետագա առաջընթացը հնարավոր է միայն ճիշտ հիմնավորված պետական քաղաքականության շնորհիվ: Նկատենք, որ համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում տնտեսական անհաջողությունները չեն կարող պատճառաբանվել նաև երկրի փոքր չափերով, առավել ևս, որ մի շարք տեսաբանների կարծիքով փոքր երկրները նույնիսկ որոշակի առավելություն ունեն արտահանմանն ուղղված տնտեսության ձևավորման ոլորտում:²⁶ Ինչպես արդեն նշվել է, չնայած վերջին տասնամյակում ԶԳ-ում ներգնա զբոսաշրջության դինամիկայում դրական աճ է արձանագրվել, այնուամենայնիվ, զբոսաշրջային շուկան դեռևս ցածր մրցունակություն ունի ինչպես հանրապետությունում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Այսինքն,

²⁶ Schumacher E., "Small is Beautiful: Economics as if People Mattered", NY, 1973, p. 36.

գրոսաշրջության ոլորտի ակտիվացմանը խթանող ենթակառուցվածքների ընդլայնման տնտեսական ազդեցությունը մակրոտնտեսական մակարդակով առաջանցիկ բնույթ ունի գրոսաշրջային բուն գործունեության արդյունքներից, որը ևս մեկ անգամ վկայում է գրոսաշրջային շուկայի մրցունակության բարձրացման անհրաժեշտության մասին:

ՀՀ գրոսաշրջության զբաղեցրած տեղը միջազգային գրոսաշրջային շուկայում ներկայումս մտահոգության տեղիք է տալիս: Չնայած հարուստ պատմամշակութային և բնական գրոսաշրջային ռեսուրսների առկայությանը՝ Հայաստանը ներկայումս չի դիտվում որպես համաշխարհային գրոսաշրջային կենտրոն: Հետևաբար, Հայաստանն ունի համաշխարհային շուկայում գրոսաշրջությունը պատշաճ կերպով դիրքավորելու կարիք: Իհարկե, գերակա ոլորտ հայտարարված գրոսաշրջության զարգացման համար բյուջեից հատկացված միջոցները մեծ չեն վերջին տարիներին կազմելով 50 միլիոն դրամ,²⁷ սակայն ցուցանիշներից ու ծրագրային միջոցառումներից պարզ է դառնում, որ անգամ դրանք արդյունավետ չեն օգտագործվում: ՀՀ պետական բյուջեից գրոսաշրջության զարգացմանը հատկացված միջոցների ծախսային ուղղությունները արտացոլված են գծապատկեր 7-ում:



Գրոսաշրջության ոլորտի զուգազգացմանը կառավարական համակարգի կատարելագործում

- Սվանդուկյան տունակառուցությունների կազմակերպում և անվտանգում

Գրոսաշրջության հիմնախնայից մեծ մասն ուղղված միջոցառումներ

- Գրոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալում

Գծապատկեր 7. ՀՀ պետական բյուջեից գրոսաշրջության զարգացմանը հատկացված միջոցների ծախսային ուղղությունները, 2012թ.²⁸

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում, ելնելով մրցունակության բարձրացման նպատակներից, առանձնահատուկ կարևորություն է ծեռք բերում ոչ միայն տնտեսության առանձին ոլորտների, այլ նաև դրանց մասնագիտացված ուղղությունների դիվերսիֆիկացումը:

²⁷ «Հայաստանի Հանրապետության 2012թ.-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք ընդունված 08.12.2011թ., հոդված 7: «Հայաստանի Հանրապետության 2011թ.-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք ընդունված 09.12.2010թ., հոդված 7: «Հայաստանի Հանրապետության 2010թ.-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք ընդունված 10.12.2009թ., հոդված 7:

²⁸ <http://www.emedia.am/?p=25834/50+mfn+dram+c+hatkacvel+zbovashrjutyanyvolorti+zargacmany>

Չափազանց թույլ է զարգացած ոչ ավանդական ուղղությունների հանդիսացող կրթության նպատակներով, ագրոգրոսաշրջության և արկածային զբոսաշրջային այցերը, որոնք եական մաս չեն կազմում պոտենցիալ զբոսաշրջիկների հետաքրքրությունների շրջանում: Այս համատեքստում զբոսաշրջության ծևերի բացահայտումը և դիվերսիֆիկացված փաթեթ ներկայացնելու տեսլականը խիստ արդիական է դառնում: Ատենախոսի կարծիքով, Հայաստանը գտնվում է զբոսաշրջության բեկումնային զարգացման գործընթացում: Այս ներուժն օգտագործելու համար անհրաժեշտ է իրականացնել ՀՀ զբոսաշրջության ոլորտի ուղղակի խթանում հիմնական շուկաներում և զարգացնել զբոսաշրջային նոր ուղղություններ:

Ավելին, հաշվի առնելով զբոսաշրջության ուղղակի և անուղղակի ազդեցությունը տնտեսության բազմակողմանի զարգացման վրա՝ արդիական է զբոսաշրջության մրցունակության գերակայությունների բացահայտումը միջազգային շուկայում ՀՀ դերակատարման բարձրացման և մարքեթինգային միջոցառումների արդյունավետ կազմակերպման նպատակով: Բնականաբար, ոչ ֆինանսական, ոչ էլ մարքեթինգային տեսանկյունից նպատակահարմար չէ զբոսաշրջային բոլոր ուղղությունների միաժամանակյա զարգացումը, հետևաբար՝ անհրաժեշտ է դառնում առաջնահերթությունների սահմանումը: Գնահատելով առկա զբոսաշրջային ռեսուրսները՝ ատենախոսի կողմից առանձնացվել են զբոսաշրջության այն հիմնական ծևերը, որոնք պատմամշակութային և ճանաչողական զբոսաշրջությանը զուգընթաց, Հայաստանում իրական զարգացման ներուժ ունեն: Մասնավորապես հիմնավորվել են էկոլոգիական և ագրոգրոսաշրջության զարգացման հնարավորությունները: Միաժամանակ, այս հեռանկարային ուղղությունների զարգացումը ոչ միայն խթան կհանդիսանա մեր հանրապետությունում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման համար, այլ նաև հնարավորություն կընձեռի զբոսաշրջային արդյունքի առաջարկի դիվերսիֆիկացման շնորհիվ ընդգրկել տարբեր պահանջումներ ունեցող զբոսաշրջիկների լայն շրջանակ:

Վերջինիս իրագործման համար խիստ կարևոր է տեղի բնակչությանը մասնակից դարձնելը և ստացված օգուտների արդարացի բաշխումը, ինչը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ տեղի բնակչությունը շոշափելի և կայուն եկամուտներ ստանա զբոսաշրջությունից: Սա իր հերթին կնպաստի, որ մի շարք զբոսաշրջային կենտրոններ ներգրավվեն մրցակցային պայքարի մեջ՝ փորձելով առաջատար դիրքեր գրավել: Ավելին, տեղի բնակչության կողմից պահպանվող տարածքներում կնվազի բնական ռեսուրսների շահագործումը՝ նպաստելով «առողջ» շրջակա միջավայրի պահպանությանը: Հակառակ դեպքում՝ բնակչության բացասական վերաբերմունքը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ տվյալ զբոսաշրջային վայրի հետագա զարգացման և մրցունակության ապահովման գործընթացում: Ուստի, հիմք ընդունելով վերոնշյալը, զբոսաշրջային կենտրոնների մրցակցային պայքարը կանխորոշող Պրոտերի մրցակցային 5 ուժերի մոդելը ատենախոսի

կողմից համալրվել է ևս մեկ բաղադրիչով՝ զբոսաշրջային վայրի տեղի բնակչության բացասական ազդեցության վտանգով (տես՝ զճապատկեր 8):



Չճապատկեր 8. Զբոսաշրջային կենտրոնների մրցակցային պայքարի մոդել²⁹

Անժխտելի է այն փաստը, որ Նոր Ճևաչափի ներդրումը հնարավորություն կընձեռի նորովի վերաիմաստավորել համայնքի բնակիչների կողմից զբոսաշրջության ընկալումը և կարևոր խթան կհանդիսանա ՀՀ մարզերում հյուրատնային ցանցերի (Bed and Breakfast) զարգացման և զբոսաշրջային հոսքերի ավելացման համար: Վերջինս կարող է իրողություն դառնալ, եթե տեղի բնակչությունը իր վրա զգա զբոսաշրջության տնտեսական օգուտները, ինչը, ատենախոսի կարծիքով, կարելի է իրականացնել զուգահեռաբար կիրառելով հետևյալ երկու մոտեցումները.

- Բարձրացնել համայնքի բնակչության ներգրավվածությունը և նասնակցության աստիճանը զբոսաշրջության զարգացմանն ուղղված իրականացվող ծրագրերին և միջոցառումներին:
- Հնարավորինս ապահովել տեղի բնակչության զբոսաշրջությունից օգուտ ստանալու հնարավորություններ:

Ռոպես տեղի բնակչության ներգրավման արդյունավետ միջոց նպատակահարմար է, կառավարության համապատասխան որոշմամբ, ստեղծել «Այցելուների տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ, որին վերապահված կլինեն և

²⁹ Կազմված է ատենախոսի կողմից՝ հիմք ընդունելով Մայքլ Պորտերի մրցակցային 5 ուժերի մոդելը:

տեղեկատվական և զարգացման գործառույթներ: Բացի մշտական աշխատողներից, պայմանագրային հիմունքներով ակտիվ կիսմագործակցի տեղի բնակչության հետ փառատոնների և միջոցառումների, գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառների և ուսումնական ծրագրերի իրականացման ժամանակ: Միաժամանակ, այն այցելուներին կտրամադրի տեղեկություններ տվյալ համայնքի զբոսաշրջային հնարավորությունների մասին ակտիվ համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ: Կենտրոնը կիրականացնի նաև ինտերնետային կայքի վարում, զբոսաշրջային ուղեցույցների, տեղեկատվական բուկլետների հրատարակում, կիսանդիսանա մարզում զբոսաշրջության խթանման առաջնային պատասխանատուն:


Հարկ է ընդգծել, որ երրորդ գլխում իրականացվել է նաև SWOT վերլուծություն, որի արդյունքում մշակվել է մրցունակության բարձրացման ռազմավարություն: Վերլուծության տվյալների հավաստիության նպատակով զբոսաշրջության ուժեղ և թույլ կողմերը համադրվել են ըստ ազդեցության աստիճանի, իսկ հնարավորությունների և սպառնալիքների վերլուծության ժամանակ, բացի ազդեցության աստիճանից, հաշվի է առնվել նաև դրանց հանդես գալու հավանականությունը: Բնականաբար առաջնային լուծում են ստացել հավանականության և ազդեցության բարձր աստիճան ունեցող խնդիրները:³⁰ Ելնելով վերջինիս արդյունքներից, ընտրված գործոնների հիման վրա ձևավորվել են այլընտրանքային ռազմավարությունները, որոնք ուղղված են առկա հնարավորությունների առավելագույն օգտագործմանը և հետագա սպառնալիքների ի հայտ գալու հավանականության նվազեցմանը:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները, կարելի է փաստել, որ զբոսաշրջության ոլորտում մրցունակության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է միաժամանակ իրականացնելով պրոակտիվ ներդրումային քաղաքականություն: Այս համատեքստում հատկանշական է ընդգծել, որ հանրապետությունում զբոսաշրջության ոլորտում վերջին տարիներին ներդրումների աճ է արձանագրվել: Այսպես եթե 2003թ.-ին ՀՀ զբոսաշրջության ոլորտում կատարված կապիտալ ներդրումները կազմել են 8.2 միլիարդ դրամ, ապա 2012թ.-ին ցուցանիշն աճել է շուրջ 3.5 անգամ կազմելով 29.6 միլիարդ դրամ: Կանխատեսվում է, որ ներդրումների ծավալը 2020թ.-ին կկազմի 55.8 միլիարդ դրամ: Ներդրումների իրականացման աշխուժացումը հանգեցրեց նրան, որ հանրապետությունում վերջին տաս տարիներին այդ բնագավառին առնչվող աշխատատեղերի 4.9% աճ արձանագրվեց: Միայն 2012թ.-ին զբոսաշրջային ուղղակի, և դրան սպասարկող այլ ճյուղերի գործունեության շրջանակներում

³⁰ Вихавский О.С. Стратегическое управление: Учебник.-2-е изд., перераб. и доп. - М.: Гардарики, 1998, стр. 30-33.

զբաղվածների թվաքանակը կազմել է 87000 մարդ, որը համրապետությունում առկա աշխատատեղերի 7.3% է:³¹

Սակայն, միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ զբոսաշրջային ներդրումների մասնաբաժնի աճի տեմպը ընդհանուր ներդրումների ծավալում փոքր է ի համեմատ համաշխարհային զբոսաշրջային շուկայում կատարված ներդրումների ծավալների (տե՛ս գծապատկեր 9):



Նշում. 4-կանխատեսված

Գծապատկեր 9. Զբոսաշրջային ներդրումների մասնաբաժինը ընդհանուր ներդրումների ծավալում աշխարհում և Հայաստանում 2003-2012թթ. (%)³²

Ատենախոսի հանդգնմամբ, համաշխարհային զբոսաշրջության դինամիկ աճող մրցակցային միջավայրի հրամայականներին դիմակայելու համար անհրաժեշտ է ներդրումների մեծ հոսքեր ուղղել հատկապես ենթակառուցվածքների ձևավորման, հյուրանոցային օբյեկտների կառուցման և մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ: Զբոսաշրջության ոլորտում ներդրումները խթան կհանդիսանան տնտեսության մի շարք ոլորտների համար, իսկ եթե դրանք նաև արդյունավետ կառավարվեն, ապա կնպաստեն բնապահպանական և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակների իրագործմանը: Իսկ զբոսաշրջային արդյունաբերությունում մարդկային ռեսուրսների մասնագիտական հմտությունների զարգացումը ոչ միայն բարձրորակ զբոսաշրջային ծառայություններ մատուցելու երաշխիք կհանդիսանա, այլ նաև առանցքային դեր կխաղա Հայաստանի նկարագրի ձևավորման համար:

³¹Travel and Tourism Economic Impact 2012-2013: Armenia, Travel and Tourism Council, London, UK, 2012-2013, p. 1.

³² Հաշվարկված է ըստ համաշխարհային զբոսաշրջության և ճանապարհորդությունների խորհրդի 2003-2012թթ.-ի տվյալների բազայի, <http://www.wttc.org/research/economic-data-search-tool/>

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ատենախոսի կողմից ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները:

1. Ներկայիս համաշխարհային տնտեսությունը բնութագրվում է զբոսաշրջային արդյունաբերության դերի բարձրացմամբ, քանի որ անընդհատ ընդլայնվում է մատուցվող ծառայությունների շրջանակը, նկատվում է ոլորտում զբաղվածների թվի աճ: Զբոսաշրջության կարևորության մեծացմանը զուգահեռ, աճում է նաև դրա մրցունակության և ոլորտի զարգացվածության գնահատման ունիվերսալ մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը: Ուսումնասիրության արդյունքում համակարգված են մրցունակության գնահատման հիմնական մոտեցումները: Բացահայտված է, որ մրցունակության գնահատման համար կիրառվող մոդելները հիմնված են վարկանիշային գնահատականների վրա և հիմնականում տարբերվում են ցուցանիշների քանակով և կազմով, ինչպես նաև դրանց կշռային գործակիցներով:

2. Զբոսաշրջային արդյունաբերության մրցունակության գնահատումը կարելի է դիտարկել բազմաբնույթ կտրվածքներով հետապնդելով տարածաշրջանային, միջճյուղային, մակրո- և միկրոտնտեսական շահեր: Ատենախոսը նպատակահարմար է համարել թվարկված մրցակցային շահերի սինթեզում և ներկայացումը երկու մակարդակներում մակրո- և մեզո-: Դա հատկապես կարևոր է ներգնա զբոսաշրջության զարգացման տեսանկյունից, քանի որ Գայաստանը համաշխարհային զբոսաշրջային շուկայում պետք է հանդես գա որպես գրավիչ և մրցունակ զբոսաշրջային ուղղություն, որն ունակ է խթանելու ինչպես ամբողջ երկրի (մակրոմակարդակ), այնպես էլ առանձին զբոսաշրջային կենտրոնների (մեզոմակարդակ) մրցունակությունը:

3. Աշխատանքում հիմնավորված են զբոսաշրջային կենտրոնների և առանձին ուղղությունների մակարդակով մրցունակության գնահատման կարևորությունը, քանզի զբոսաշրջային ռեսուրսները բաշխված են անհամաչափ, և զբոսաշրջության ոլորտում ճշգրիտ կառավարչական որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ է ոչ միայն համարժեք գնահատել մրցակցային առավելությունը որոշող ամբողջ զբոսաշրջային ներուժը, այլև գնահատել դրա իրական մրցակցային առավելության փոխակերպման հնարավորությունը:

4. Վերջին 10 տարվա ընթացքում 33 զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման բարձր տեմպեր: Սակայն համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում Գայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ թվով: Գայաստանին են բաժին ընկնում Եվրոպայում զբոսաշրջային այցելությունների միայն 0.15%-ը և համաշխարհային զբոսաշրջային այցելությունների 0.08%-ը: Անհրաժեշտ է կիրառել «ազդեցիկ» մարքեթինգային քաղաքականություն՝ նպատակելով երկրի համաշխարհային ճանաչելիությանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջիկների ներգրավման համացանցային էջերը առավելապես նկարագրական բնույթ ունեն՝ ներկայացնելով երկրի պատմամշակութային արժեքները: Անհրաժեշտ է ներդնել

բազմաֆունկցիոնալ կայք, որն ակտիվորեն կգովազդի մեր երկիրը և կգործի travel տիրույթում, ինչը բնորոշ է զբոսաշրջությունը գերակա ճյուղ հայտարարած մի շարք երկրներին:

5. Համաձայն զբոսաշրջության մրցունակության համաթվի 2012թ.-ին 140 երկրների մեջ Հայաստանը զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը: Պատկերը մտահոգիչ է Հայաստանի համար, հատկապես եթե հաշվի առնել, որ զբոսաշրջությունը տնտեսության զարգացման գերակա ուղղություն է: Անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել մրցակցային առավելությունների վերականգնման և համադրելի երկրներում Հայաստանի դիրքի բարելավման ուղղությամբ: Հեղինակի կարծիքով կայուն զբոսաշրջության զարգացման մեջ կարևոր է համայնքների ընդգրկվածությունը՝ թե ներքին, և թե միջազգային զբոսաշրջիկների ակտիվ ներգրավման նպատակով: Միայն ճանաչողական նպատակով այցը մշակութային վայր, առանց գիշերակացի, սննդի կազմակերպման և այլ հարակից ծառայություններ ներառելու, ինչպես ներկայումս կազմակերպում են տուրօպերատորները, բավարար չէ զբոսաշրջության ոլորտում մրցունակ դիրքեր զբաղեցնելու տեսանկյունից:

6. Ջրոսաշրջության զարգացման լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման համար ատենախոսն առաջարկում է ՀՀ օրենսդրության սահմաններում ստեղծել զբոսաշրջությունից ստացված եկամուտներից ոլորտի զարգացմանը ուղղակի հատկացումների մեխանիզմ: Մասնավորապես կարելի է դիտարկել մի շարք երկրների հյուրանոցային տնտեսությունների օբյեկտներում կիրառվող «զբոսաշրջային հարկը», որը տատանվում է 1-5%-ի սահմաններում: Նպատակահարմար է կիրառել նվազագույն հարկման շեմը (1 ԱՄՆ դոլարին համարժեք սիմվոլիկ գումարի տեսքով) և լրացուցիչ ֆինանսական միջոցները ուղղել ոլորտի հետագա զարգացմանը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2012թ.-ին հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանել է 136644 զբոսաշրջիկ, իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 514771 մարդ, պարզ մաթեմատիկական հաշվարկի միջոցով ակնհայտ է դառնում, որ դա կապահովի ավելի քան 260 միլիոն դրամի լրացուցիչ ֆինանսական հոսքեր՝ ավելացնելով զբոսաշրջային ոլորտի զարգացմանը հատկացվող միջոցները:

7. Հայաստան այցելող զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության և այցելության նպատակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները ներկայումս հավաքագրվում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկներից: Փաստորեն, բարեկամի կամ հարազատի տանը կամ վարձու տրվող բնակարաններում հանգրվանած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության և ժամանման նպատակի մասին տեղեկություններ չկան, ինչը շատ խոցելի է դարձնում զբոսաշրջության վիճակագրության տվյալների հավաստիությունը և զարգացման տեսլականի իրականացման հնարավորությունները, առավել ևս, որ վերջիններս մեծ տեսակարար կշիռ են կազմում ընդհանուր ժամանումների մեջ (շուրջ 83%): Ավելին, այսօր հրատարակվող վիճակագրության մեջ բացակայում է հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնողների շրջանում

զբոսաշրջիկների վերաբերյալ հնարավորինս հավաստի տվյալների հավաքագրման հնարավորությունը, որոնք կբնորոշեն զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը, ժամանման և մեկնման նպատակը, ճանփորդության կազմակերպման եղանակները, կատարված ծախսերը և զբոսաշրջիկների սեռատարիքային կազմը:

8. Վերոգրյալից հստակ ուրվագծվում է զբոսաշրջային գործունեության սոցիալ-տնտեսական հետևանքների տեղեկատվական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, որով հնարավորություն կստեղծվի ոլորտին առնչվող տնտեսական նոր ցուցանիշների օգնությամբ գնահատելու զբոսաշրջային արդյունաբերության արդյունավետությունը: Ներկայումս զբոսաշրջության սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգը կատարելագործման կարիք ունի, և եթե միջազգային տեղեկատվական աղբյուրները որոշակիորեն ներկայացնում են ՀՀ զբոսաշրջային շուկայի մրցակցային դիրքերը, ապա ՀՀ ԱՎԾ-ն ոլորտին առնչվող ցուցանիշների չափազանց սեղմ ցանկ է առաջարկում: Միաժամանակ, հաշվի առնելով վիճակագրական տվյալների ռազմավարական նշանակությունը մրցունակության գնահատման համատեքստում, հրատապ է զբոսաշրջության վիճակագրությունը ՁՀԿ մեթոդաբանությանը և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի և տարածքային կառավարման նախարարությունների, քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, ԱՎԾ-ի և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ձևավորել աշխատանքային խումբ և միջոցառումներ ձեռնարկել «Զբոսաշրջային սատելիտային հաշիվ» ժամանակակից համակարգի ներդրման ուղղությամբ: Վերջինս կընձեռի մանրակրկիտ վիճակագրական տվյալների ստացման և կառավարչական որոշումների կայացման արդյունավետության բարձրացման հնարավորություն:

9. Երկրում զբոսաշրջության զարգացման կարևոր խնդիրներից մեկը զբոսաշրջության ձևերի դիվերսիֆիկացումն է: Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ օգտագործելով ՀՀ զբոսաշրջային ներուժը և զարգացնելով միջազգային շուկայում մեծ պահանջարկ վայելող զբոսաշրջային նոր ուղղությունները, հատկապես հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան և հարավային միջանցքներում, հնարավոր է ձևավորել համակցված և դիվերսիֆիկացված զբոսաշրջային փաթեթ, որը երկարաժամկետ հեռանկարում թույլ կտա մեր երկրում արժանագրել ինչպես ներգնա զբոսաշրջության աճ, այնպես էլ մրցունակության բարձրացում:

10. Զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման և արտահանման ծավալների աճի համար անհրաժեշտ է ոլորտն ապահովել որակյալ կադրերով ստեղծելով առավել սերտ համագործակցություն միջին մասնագիտական կրթությունն իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) և քոլեջների հետ:

11. Զբոսաշրջիկների աճի հետ մեկտեղ, տարեցտարի աճում է նաև զբոսավարների պահանջարկը: Սակայն այսօր հնարավոր չէ պարզել ոչ միայն

զբոսավարների և ուղեկցորդների քանակը Հայաստանում, այլև վերահսկել վերջիններին տիրապետած գիտելիքները: Իսկ երկրի վարկանիշի համար շատ կարևոր է, որ պատահական ընկերություններ չներկայացնեն Հայաստանը: Սակայն ՀՀ-ում 2011թ.-ի հունվարի 1-ից, համաձայն 2010թ.-ի դեկտեմբերի 8-ին ընդունված «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, դադարեցվել է զբոսավարների և ուղեկցորդների լիցենզավորումը, ինչը, ըստ ոլորտի պատասխանատուների, միտված էր «գործարար միջավայրի բարելավմանը»: Սա ծնում է ռիսկ, որ առանց լիցենզավորման գործող զբոսավարները կարող են Հայաստանը ոչ պատշաճ կերպով ներկայացնեն զբոսաշրջիկներին չտիրապետելով անգամ զբոսավարի էթիկային: Զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման դադարեցումը գնահատելով խիստ բացասաբար, անհրաժեշտ է օրակարգ վերադարձնել լիցենզավորման գործընթացը եթե ոչ պարտադիր, ապա կամավոր համակարգի ներդրման միջոցով, ինչը գործում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման դեպքում:

12. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են ՀՀ տարածքում, ինչը չի գործում տեղաբնակներին մատուցվող զբոսաշրջային ծառայությունների դեպքում:³³ Նպատակահարմար է ՀՀ զբոսաշրջային շուկայի մրցունակության բարձրացման և ներքին զբոսաշրջության խթանման նպատակով տեղաբնակներին մատուցվող զբոսաշրջային ծառայություններն ազատել ԱԱՀ-ից: ԱԱՀ ազատումից բխող հարկային հոսքերի կրճատումները կփոխհատուցվեն շուկայում ծառայությունների պահանջարկի հավելաճով, և ներքին զբոսաշրջիկներին մատուցվող ծառայությունները կդառնան մրցունակ՝ այլ երկրներում մատուցվող նմանատիպ ծառայությունների նկատմամբ: Մյուս կողմից, որպես օտարերկրյա այցելուների շրջանում զբոսաշրջային ոլորտի գրավչության բարձրացման ուղի է դիտարկվել եվրոպական մի շարք երկրներում արդեն իսկ սահմանի վրա կիրառվող՝ «մեկնում - գնված ապրանքների արտահանման ժամանակ ԱԱՀ գումարների փոխհատուցում» մոդելը:

³³ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք ընդունված 14.05.1997թ., հոդված 34:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Առաքելյան Մ. Վ., Ձրոսաշրջության ներդրումային միջավայրի պետական կարգավորման բարելավման ուղիները// Օրենք և իրականություն #6 (188), հունիս, Երևան, 2011, էջ 33-34:
2. Առաքելյան Մ. Վ., ԳԳ զբոսաշրջության միջազգային մրցունակության վերլուծությունը համադրելի տարածաշրջաններում// Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա #5 (131), մայիս, Երևան, 2011, էջ 40-42:
3. Առաքելյան Մ. Վ., ԳԳ զբոսաշրջության ոլորտի արդի վիճակի վերլուծություն// Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա #12 (150), դեկտեմբեր, Երևան, 2012, էջ 79-80:
4. Առաքելյան Մ. Վ., “Emerging Trends and Prospects of Armenia’s Tourism Industry Development// Հանրային կառավարում #3-4, Երևան, 2013, էջ 116-124.

Аракелян Марине Вардгесовна

Проблемы Повышения Конкурентоспособности в Сфере Туризма РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 8-ого Мая, 2014 г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

На сегодняшний день, одной из важнейших задач правительства РА является обеспечение благополучия населения в стране и борьба с бедностью. Решение данной проблемы стоит на повестке дня для правительства в виде повышения уровня дифференциации экономики и стимуляции прочих отраслей экспорта. История развития мировой экономики и опыт стран мира показывает, что туризм может служить в качестве сферы, способствующей решению ряда социально-экономических проблем, поскольку он позволяет использовать сформировавшийся во всем мире и, практически, неограниченный спрос на путешествия, который является источником огромных доходов для любой страны. Имея в виду показатели в сфере туризма за последние годы, можно заключить, что в РА туризм имеет достаточно большой потенциал, чтобы способствовать развитию экономики и служить альтернативой для других отраслей.

Цель и задачи исследования. Цель данной диссертации заключается в комплексном анализе современного состояния сферы туризма, а также, на основе изучения общего механизма конкурентоспособности отрасли, в выявлении возможных подходов повышения конкурентоспособности туризма РА. Реализация этих целей предполагала обсуждение следующих задач:

- Изучить сущность конкурентоспособности туризма и характерные особенности,
- Выявить особенности проявления конкурентоспособности сферы туризма на всех уровнях конкурентоспособности и анализировать основные подходы оценивания конкурентоспособности, в целях совершенствования методики оценивания конкурентоспособности,
- Изучить туристический рынок РА, выявить предпосылки развития туризма и основные факторы, препятствующие развитию внутреннего и въездного туризма,

- Осуществить сравнительный анализ туристического рынка РА и мирового рынка и выявить конкурентные привилегии и недостатки,
- Выявить основные направления повышения конкурентоспособности туристического рынка РА и разработать концептуальные положения по обеспечению конкурентоспособности,
- Представить значение и функции государственной регламентации в процессе повышения конкурентоспособности, указывая на направления государственных регламентационных реформ:

Основные научные результаты и новинки исследования.

1. Принимая в качестве ориентации рейтинговые показатели и оценки международных структур, характеризующих конкурентоспособность, был произведен корреляционный анализ, с помощью которого были выявлены первичные цели реформ в сфере туризма.
2. Был произведен детальный SWOT анализ, в результате чего была разработана стратегия повышения конкурентоспособности туризма, в основе которой лежит создание дифференцированных и систематизированных (на основе историко-культурного и делового туризма) пакетов, осуществление проактивной инвестиционной политики, направленной на переподготовку человеческих ресурсов и развития инфраструктур, а также на активизацию применения традиционных и информационных технологий продвижения туризма.
3. Была предложена новая модель по повышению привлекательности туристических центров, основанная на активном участии местного населения, на основе экономических мотивов. Это положение в работе представлено еще одним элементом модели конкурентных сил Портера: опасностью негативного влияния местного населения.
4. В результате всестороннего анализа законодательной сферы, регулирующей туристическую отрасль, были выявлены имеющиеся недостатки и упущения, была предложена концепция законодательных реформ, направленная на усовершенствование механизма государственного регулирования, на применение более предпочтительных инструментариев, на улучшение процессов квалификации гостиничных хозяйств, на восстановление процесса лицензирования гидов и проводников и на доработку методики официальной статистики в сфере туризма.

Arakelyan Marine Vardges

Challenges of Increasing the Competitiveness of Tourism Sphere in the RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02– “Economics, Management of the Economy and its Spheres”.

The defense of the thesis will take place on May 8, 2014 at 14:00 o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan str., Yerevan 0025.

ABSTRACT

Today a crucial task of the RA government is the battle against poverty in order to ensure social well-being for its citizens. The government's solution to the following problem is the concentration of efforts in improving the economy and stimulating diversification in other sectors of exports.

History of the world economy and the global experience has demonstrated that tourism can serve as a means for generating immense profit. This as a result, may contribute to the solution of numerous socio-economic problems, since tourism provides the opportunity to use the worldwide formed and virtually unlimited stable demand for travel. Taking into consideration the indicators that tourism has recorded in recent years, we can surely state that tourism in Armenia has a rather great potential to contribute to the economic development, and serve as an alternative to other industries.

Objective and tasks of the research. The main objective of this research is to identify the possible approaches in enhancing the competitiveness of tourism sphere in the RA based on the detailed analysis of its current state and on the study of comprehensive mechanism of the sector competitiveness. For achieving the main purpose of the study, the following tasks are put forward:

- Examine the nature of tourism competitiveness and present its specific features.
- Identify peculiarities of competition at all levels of competitiveness and analyze the main approaches of its assessment aimed at the improvement of competitiveness assessment methodology.
- Study the tourism market in Armenia; determine the prerequisites for sector development and the main factors impeding the development of internal and inbound tourism.

- Carry out comparative analysis of Armenia's and World tourism markets and identify competitive privileges and disadvantages.
- Reveal the priority directions of improving the competitiveness of the tourism market and develop conceptual RA provisions to ensure competitiveness.
- Define the role and functions of tourism state regulation in the process of enhancing competitiveness and in the meantime pointing out reform directions.

As a result of research performed, following are a series of results among which are basic scientific innovations:

1. Taking into consideration rating indicators and assessments of international structures that characterize factors of competitiveness, correlation analysis has been carried out, contributing to the identification of primary targets of tourism reform.
2. Detailed SWOT analysis have been carried out which lead to the development of tourism competitiveness strategy, which is supported by diversified and combined tourism package based on cultural and business travel, realization of proactive investment policy, that is aimed at training human resources and developing infrastructure, as well as activating contemporary information technology usage for tourism promotion.
3. A new model, aimed at increasing the attractiveness of tourist destination that is highly supported by the local population active participation has been proposed, which, in its turn, must be based on economic incentives. This postulate is reflected in this work as a new component in Porter's Five Forces Model: risk of negative behavior of local population.
4. In the result of comprehensive analysis of legislative framework, that regulates the tourism sphere, the existing gaps and shortcomings have been revealed, a concept for legislative changes that has the purpose to improve state regulatory mechanisms by the implementation of more preferable toolkits, to enhance the process of qualification of the objects of hotel industry, to restore the licensing process of guides and escorts and to improve the methodology of official statistics in the tourism sector has been offered.

